

Նաթիա Գորգաձե

Քաղաքացիական ինտեգրման և ազգամիջյան փոխհարաբերությունների կենտրոն

**ԻՆՖՈՐՄԱՏԻԿՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ
ԿԱՐԴԱԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ**

Աշակերտների կարդալու կարողությունների զարգացման վարժանքների վրա աշխատելու հետևանքով (որը ԵԱՀԿ Ազգային փոքրամասնությունների հանձնակատարի գրասենյակի ֆինանսավորմամբ իրականացրեց Քաղաքացիական ինտեգրման և ազգամիջյան փոխհարաբերությունների կենտրոնը), կազմել ենք և ձեռք ենք առաջարկում ինֆոգրաֆիկների վերաբերյալ համառոտ հոդված, որը հնարավորություն կտա տեսնել, թե ինչու կարող են ինֆոգրաֆիկները դառնալ կարևոր գործիք գրագիտության զարգացման համար: Ավելի հստակության համար, մեկ օրինակի հիման վրա առաջարկում ենք նաև աշակերտների հետ ինֆոգրաֆիկներով աշխատելու, ըստ մեզ, մեկ արդյունավետ մեթոդ:

Ի՞նչ է ինֆոգրաֆիկը և ինչո՞ւ ենք համարում, որ այն բավականին հետաքրքիր է աշակերտների հետ աշխատելու ժամանակ:

Անվիճելի է, որ տեղեկատվության տեսանելիացումը և հաղորդակցությունը 21-րդ դարի գրագիտության պարտադիր բաղադրամասն են հանդիսանում:

Ինֆոգրաֆիկը գծապատկերների, նկարների և տեքստի միասնականությունն է, որը մարդկանց տեղեկատվություն է մատուցում համալիր հարցերի վերաբերյալ: Այսպիսի հարցերը միայն տեքստային ձևաչափով հասկանալը, տարբեր պատճառներով, բավականին բարդ է: Իսկ այս բարդությունը կարող է մի քանի գործոնով լինի հարուցված:

1. Հարցի համալիրություն`

բարդությունը հարուցված է ընդարձակ նյութն ամբողջությամբ փոխանցելու կամ բացատրելու ցանկությամբ կամ անհրաժեշտությամբ: Իսկ սա կապված է մեծ քանակությամբ տեղեկատվության հայթայթման, իմաստավորման և մշակման հետ:

2. Լսարանի ոչ բավարար պատրաստականություն,

որի համար բարդ է տեղեկատվությունն ընդունել տեքստային ձևով, ինչը պայմանավորված է ընդարձակ տեղեկատվության հետ աշխատելու անբավարար փորձով, լեզվական բարդություններով, ոչ լրիվ նախնական գիտելիքով և այլ բազմաթիվ գործոններով:

Հենց այս դեպքում ինֆոգրաֆիկի կարևորությունն արտահայտվում է հետևյալ ասպեկտներում.

Այն հանդիսանում է տեսանելի, ակնադիտական բացատրություն, որն օգնում է որոշակի հարցեր պարզ հասկանալ և ստացած գիտելիքն արդյունավետ օգտագործել:

Չնայած հզոր տեսանելի ծանրաբեռնությանը, պարունակում է բառեր և նկարներ` դինամիկ և տրամաբանական հաջորդականությամբ:

Տալիս է կոնկրետ և խելացի դրույթներ, որոնք կարող ենք չկապել այլ հարցերի հետ և, համապատասխանաբար, ինքնուրույն կազմել բացատրություն

կոնկրետ առարկայի /երևույթի/
ուղղության վերաբերյալ:

Հնարավորություն է տալիս թաքնված և
անտեսանելի տեղեկատվության վրա լույս
սփռել:

Այնպես է պլանավորված, որ
հնարավորություն է տալիս հարցն արագ և
հետևողականորեն գիտակցել:

Եվ որ ամենակարևորն է, այն
համապիտանի է, բոլորի համար միանման
հասկանալի է և, համապատասխանաբար,
պակաս է կապված լսարանի մշակութային
եսի հետ:

Բոլոր այս հատկություններից ելնելով՝
ինֆոգրաֆիկները բավականին
արդյունավետ կարելի է կիրառել
դասասենյակում: Խնդիրները, որ կարող
են պարունակել ինֆոգրամաները,
պայմանականորեն կարելի է երեք մասի
բաժանել.

1. Ինֆոգրաֆիկներ, որպես
տեղեկատվության հիմնական
աղբյուր, որը տրված է համառոտ,
հասկանալի դրույթների կամ
եզրակացությունների տեսքով:
2. Տեսանելի և քննադատական
գրագիտության ուսումնական գործիք,
որտեղ խրախուսված է
ստեղծագործական մտածողությունը:
3. Ուսանողների համար արդյունավետ
միջոց՝ արտահայտելու սեփական
ենթադրությունները և լսելու
ընկերների կարծիքները:
Ուշագրավ է, որ ինֆոգրաֆիկի
միջոցով, ելնելով նրա
յուրօրինակությունից, աշակերտի
մոտ զարգանում են թվերը, բառերը,
գծապատկերները և նկարները
միմյանց հետ կապակցված ընկալելու
և կիրառելու կարողությունները:
Բացի այդ, ինֆոգրաֆիկները
նշանակալի ազդեցություն են գործում
աշակերտի կողմից տվյալների և

տեղեկությունների մշակման և
վերլուծման կարողությունների
զարգացման վրա:
Ինֆոգրաֆիկներն առանձնապես
նշանակալի են աշակերտի
գիտակցելու կարողության
զարգացման համար, քանի որ.

1. ցուցադրում են, թե որչափ
կարևորություն է շնորհվում
հանգուցային բառերին լրիվ
տեղեկատվության արտահայտման
համար, համապատասխանաբար,
զարգացնում է հստակ
արտահայտման. ամփոփման
կարողությունները:
2. Աշակերտին տալիս են
տարածություն և հանդիսանում են
մարտահրավեր, որ նա
երևույթները և փաստերը
մեկնաբանի և սեփական
տեսակետը ուրիշների հետ էլ կիսի,
ինչն ընդգրկում է նաև ուրիշի
մտածածի ունկնդրում և
զննհատում:
3. Հստակ արտահայտում են և
աշակերտի մտածողության մեջ
հաստատում այնպիսի
հայեցակարգային կադապարներ,
որոնք պատճառ-հետևանքի,
հիմնախնդիր-որոշման,
դասդասման, համեմատության և
հակադրության, փաստերի վրա
հիմնված ամփոփման
կառույցներից է բաղկացած:
4. Բացի այդ, ինֆոգրաֆիկները
աշակերտների համար
հանդիսանում են հոյակապ,
հստակ արտահայտչական և
հուզական օրինակ, թե ինչպես
կարելի է, որ անչափ մեծ
քանակությամբ տարբեր
տեղեկությունները կապված լինեն

միմյանց հետ և համալիր փոխանցվեն:

Պարզ է, որ հարց է ծագում, թե որքանով տեղին է տարրական աստիճանի աշակերտի առջև նման խնդիրներ դնելը, առանձնապես, երբ գործը վերաբերում է ոչ մայրենի լեզվին: Սեփական փաստարկները պաշտպանելու համար առաջարկում ենք ցուցադրական, շատ պարզ ինֆոգրաֆիկ և դրանով աշխատելու մի քանի մեթոդ: Այստեղ նախօրոք ցանկանում եմ պարզաբանել, որ նման տիպի աշխատանքը պարտադիր չէ պլանավորել մեկ դասի շրջանակներում: Խնդիրներն աստիճանաբար, փուլերով և առանց հարկադրանքի պետք է ներմուծվեն դասասենյակ և ընդգրկվեն միայն դասի որոշակի, լավ գիտակցված և սահմանված պահի:

«Ո՞ր կենդանին է ամենալավ մայր», - շատ պարզ մանկական ինֆոգրաֆիկ: ա. Թեպետ այն ընդգրկում է ինֆոգրաֆիկին բնորոշ բոլոր հատկանիշները. նկարների վրա կենդանիներ և նրանց ձագեր, տեքստ՝ յուրաքանչյուր կենդանու անվանում, թվեր, որոնք տոկոսներով ցույց են տալիս յուրաքանչյուր կենդանու մայրական հոգատարության աստիճանը և վերջում տոկոսների գրաֆիկական բաշխում:

Ինչպե՞ս աշխատենք ինֆոգրաֆիկով:

Մեկ տարբերակ է.

1. Աշխատանքի նախնական փուլում օգտագործում ենք ինֆոգրաֆիկը և երեխաներին «պատրաստում» մոր և զավակի հարաբերությունների վրա աշխատելու համար:
2. Երեխաներին բաժանում ենք խմբերի կամ զույգերի և նրանցից յուրաքանչյուրին բաժանում ենք համապատասխան կենդանու հետ կապված նախօրոք պատրաստված

տեքստեր: Տեքստերը տեղեկատվական բնույթի են և մի քանի պարզ նախադասությամբ բնութագրում են մայր կենդանու կողմից իր ձագի մասին հոգատարությունը, նրա վերաբերմունքը:

3. Երեխաներն իրենց տեքստերի վրա աշխատում են խմբերով կամ զույգերով, ինչն ընդգրկում է տեքստերի մեջ տրված նյութի գիտակցում: Ակտիվության համար պետք է նախատեսված ունենանք որոշակի ժամանակ: Խմբերին /զույգերին հերթով տալիս ենք հրահանգային ընթերցման համապատասխան աջակցություն: Երեխաներին խնդրում ենք խմբերում /զույգերում ձևակերպել մեկ նախադասություն, որն ամենից հետաքրքիր /կարևոր են համարել տեքստում: (ամփոփում)
4. Տեքստերի վրա աշխատելու հաջորդ փուլը հերթագայվում է աշխատանքով ամբողջ դասարանի հետ: Ուսուցիչը երեխաներին ծանոթացնում է յուրաքանչյուր կենդանու՝ իր ձագի հանդեպ հոգատարության աստիճանն արտահայտող տոկոսը և ավել ակներևության համար տոկոսային ցուցանիշների շրջանի վրա երեխաներին ցույց է տալիս մասնաբաժնային ցուցանիշը:

Միևնույն ժամանակ, ելնելով խնդրից, երեխաներին առաջարկում ենք պատրաստ հրահանգներ պատասխան կամ գրատախտակի վրա, որոնք նրանց կօգնեն արտահայտել սեփական փաստարկը /վերաբերմունքը և պաշտպանել իրենց դիրքորոշումը: Օրինակ.

Վերլուծություն

«Խոզն ավելի լավ մայր է, որովհետև ...»
«Կապիկն էլ ավելի լավ մայր է, որովհետև ...»

«Փիղը բոլորից ավելի լավ մայր է, որովհետև ...»

Երեխաներն իրենց նախօրոք տրված փաստարկները հերթով դասավորում են պատրաստ կառույցների միջոցով:

Աշակերտների կողմից փաստարկների պատրաստ կառույցներով կառուցումն ուսուցիչը խրախուսում է հարցերի առաջադրմամբ:

«Ինչո՞ւ ես կարծում, որ խոզն ավելի լավ մայր է»

«Ինչո՞ւ ես կարծում, որ կապիկն էլ ավելի լավ մայր է» և այլն:

Համեմատություն

«Խոզն ավելի լավ մայր է, քան կապիկը»

«Կապիկն էլ ավելի լավ մայր է, քան ...»

Դասակարգում

Կառույցները «ավելի - քան - ամենից» կարող ենք կիրառել նաև դասակարգման դեպքում: Թեպետ, այժմ արդեն երեխաներին լավը լինելու դասակարգման հնարավորություն տանք ըստ տոկոսային ցուցանիշի:

«Փիղը ամենալավ մայրն է: Նա ամենից մեծ թիվն ունի»:

«Կովը, ութոտնուկը, կատուն և հավը միատեսակ են: Նրանք միանման թիվ ունեն»:

Փաստարկում

«Դու ինչո՞ւ ես կարծում»:

«Դու ինչո՞ւ չես կարծում»:

Ամփոփում

«Ուրեմն»

«Համաձայնեցինք»

Կարդալու ունակությունների զարգացման յուրօրինակ խնդիրներն են.

1. **Բառապաշար** – կենդանիների անվանումներ և բայեր, օրինակ՝

փայփայում է, հոգ է տանում, կերակրում է, նաև, այնպիսի «տարանցիկ» բառեր և արտահայտություններ՝ քան, ամենից, ավելի և այլն:

2. **Վերծանում**՝ բառերը և պատկերներն իրար հետ կապել:

3. **Գիտակցում** – վերլուծություն, համեմատություն-հակադրում, դասակարգում, փաստարկում, ամփոփում:

Այս ինֆոգրաֆիկը շատ պարզ և ակներև օրինակ է: Պարզ է, հնարավոր է, որ ինֆոգրաֆիկն ավելի ծավալուն տեքստային նյութ ընդգրկի, նկարներն ավել տեղեկություններ արտահայտեն: Այս փոքր հոդվածը գրելու ժամանակ նույնիսկ այն մասին մտածեցի, թե որքանով է ճիշտ մոր լավ ու վատ լինելու հարց բարձրացնել աշակերտների մոտ տարրական դասարանում: Թեպետ, նորից և նորից այս ինֆոգրաֆիկը միայն ցուցադրական բնույթ է կրում և իրականում շատ ավելի հետաքրքիր, բազմակողմանի և հրահրող խնդիրների առաջադրման հնարավորություն է տալիս:

Այս օրինակի համաձայն ևս կարելի է տեսնել, որ դասերի որոշակի շարքից հետո, հայեցակարգի, եզրափակիչ դասի ժամանակ նույնպես արդյունավետ կլինի ինֆոգրաֆիկների կիրառությունը: Աշակերտների հետաքրքրության բորբոքման նպատակով, կարելի է նաև աշխատանքի ընթացքում ինֆոգրաֆիկները որպես ներածական մաս կիրառել:

Արդյունավետ ենք համարում նաև, որ աշակերտներին իրենց աշխատեցնեք ինֆոգրաֆիկների ստեղծման վրա: Դա նրանց համար ստեղծագործական գործընթաց է և բազմաթիվ տարբեր մեթոդների օգտագործման հնարավորություն է տալիս:

Natia Gorgadze

The Center for Civil Integration and Inter-Ethnic Relations

Use of information graphics to Develop Reading Skills

ABSTRACT

The article aims to present the training results conducted by The Center for Civil Integration and Inter-Ethnic Relations (CCIIR) with financial support of OSCE High Commissioner on National Minorities. The training included the issues of how information graphics (infographics) can improve reading skills and provide development of literacy in the schoolchildren. For more cleanness in the article will be presented a sample of the teaching with infographic materials, as one of the useful and effective methods to develop literacy through the learners.